Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 փետրվարի 2025թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ ՎՄ, ՍԿԼՄ, ԴԳԿ, ՄՕՄ և ԱԹԿ մասնաշենքերի տանիքների վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման նպատակով 2024 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ավան-Շին» ՍՊԸ-ն:

Մասնակցության հայտերի բացման և գնահատման նիստում, փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, հետևյալը՝ «Ավան-Շին» ՍՊԸ-ի կողմից հավելված 1-ում ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումն ակտիվ չէ և չի արտացոլվում մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները: Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավան-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշած, որպես իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը որոնողական ցանկացած համակարգում ձեռքով հավաքելու միջոցով փնտրելիս չի բացվում ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am/am/ կայքում) իրական շահառուների վերաբերյալ հաստատված/հանձնված հայտարարագիրը, այլ բացվում է իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (https://bo.e-register.am/am/auth) մուտք գործելու էջը, այսինքն էլեկտրոնային կայքի այն էջը որտեղ մուտք գործելիս լրացնում և հանձնում են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Ավելին, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am/am/ կայքում) «Որոնում» բաժնում «Ավան-Շին» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ով փնտրման արդյունքում «ԻՇ հայտարարագրեր» բաժնում տեսնում ենք կազմակերպության հանձնած իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը և այդ հայտարարագրերի հղումները և մասնակցի հավելված 1-ում ներկայացված հղումը համեմատելիս պարզ է դառնում, որ «Ավան-Շին» ՍՊԸ-ի

մասնակցության հայտում նշված հղումը տարբերվում է https://www.e-register.am/am/ կայքի հասցեների տողում նշված հղումից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի (Հրավերի բովանդակությունը) 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն.

«2. Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

2) հայտով ներկայացնում է՝

բ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին,...»:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է նաև, որ «Ավան-Շին» ՍՊԸ-ն կիսատ է լրացրել սույն ընթացակարգի հրավերով պահանջվող գործունեության հասցեն (մասնակիցը ներկայացրել է հետևյալ կերպ՝ «գ. Դաշտաքար»):

Գործունեության հասցեն ամբողջ Դաշտաքար գյուղը չի կարող լինել՝ գյուղը ունի մեկից ավելի փողոցներ և տներ: Բացի այդ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am/am/ կայքում) «Որոնում» բաժնում «Ավան-Շին» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ով փնտրելիս համակարգի համահասանելի տվյալներից պարզ է դառնում, որ կազմակերպության գտնվելու վայրը՝ «Հայաստան, ԱՐԱՐԱՏ, ԴԱՇՏԱՔԱՐ, 5Փ., ՀՈՂ 5, 0625»:

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և «Ավան-Շին» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնել էլեկտրոնային թվային-ստորագրությամբ հաստատված հավելված 1-ը, որում առկա կլինի ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (կայքում) առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ամենավերջին հաստատված /հանձնած տարբերակով՝ կայքէջի ակտիվ հղումը և գործունեության ամբողջական ու ճիշտ հասցեն:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավան-Շին» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 42-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը 2025թ փետրվարի 3-ի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ավան-Շին» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատել է անբավարար և մերժել է այն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ավան-Շին» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**